ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

10.02.2014 թվականի N 14-Հ

ՎԱՌԵԼԻՔԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի (այսուհետ՝ Ժամանակացույց) 13-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում գլխադասային չհանդիսացող Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման և ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում գլխադասային չհանդիսացող Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների հետ ՀՀ 2015-2017թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների շուրջ քննարկումների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի 2-ի :
3. Սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Լ. Շահվերդյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

Արմեն Մովսիսյան

Հավելված 1

Հաստատված է ՀՀ էներգետիկայի և

բնական պաշարների նախարարի

10 02 2014թ.

№ 14-Ն հրամանով

ԿԱՐԳ

ՎԱՌԵԼԻՔԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ՝ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1231-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի (այսուհետ՝ Ժամանակացույց) 13-րդ կետը:
2. ՀՀ տարածքային կառավարման մարմիններն իրենց կողմից վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում /այսուհետ Ոլորտ/ իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2015-2017թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակները քննարկում են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ՝ համաձայն ժամանակացույցի /հավելված 2/:
3. Քննարկումների արդյունքում ձևավորված չափաքանակների հիման վրա՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինները կազմում և մինչև 2014 թվականի ապրիլի 21-ը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն են ներկայացնում Ոլորտի գծով իրենց 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակած <Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների կողմից 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերի և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ>-ի (այսուհետ մեթոդական ցուցումներ):

4. Ոլորտի 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը՝ քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեի ծախսերի գծով առաջարկությունները՝ (ինչպես ամփոփ, այնպես էլ ըստ տվյալ Ոլորտում գլխադասային չհանդիսացող տարածքային կառավարման մարմինների գծով) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը կազմում և մինչև 2014 թվականի մայիսի 10-ը ներկայացնում է Հ ֆինանսների նախարարություն:
5. Ավարտուն տեսքի բերված՝ իրենց ոլորտային 2015-2017թթ. ՄԺԾԾ-ի նախագծերը ՀՀ տարածքային կառավարման մարմինները մշակում և մինչև 2014 թվականի հունիսի 10-ը ներկայացնում են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:
6. Ավարտուն տեսքի բերված՝ իրենց Ոլորտի ՄԺԾԾ-ի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ համապատասխան ոլորտներում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների ծախսերի 2015-2017թթ. ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկությունները ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մշակում և մինչև 2014 թվականի հունիսի 20-ը ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն:
7. ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից տարաձայնությունների առկայության դեպքում՝ կազմվում է համապատասխան արձանագրություն և սույն կարգի 4-րդ և 6-րդ կետերում նշված փաստաթղթերի հետ ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՑԱՆԿ

Վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում ՀՀ 2015-2017թվականների պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսեր իրականացնող ոչ գլխադասային մարմինների

1. ՀՀ Արագածոտնի մարզ
2. ՀՀ Արարատի մարզ
3. ՀՀ Արմավիրի մարզ
4. ՀՀ Գեղարքունիքի մարզ
5. ՀՀ Լոռու մարզ
6. ՀՀ Կոտայքի մարզ
7. ՀՀ Շիրակի մարզ
8. ՀՀ Սյունիքի մարզ
9. ՀՀ Վայոց ձորի մարզ
10. ՀՀ Տավուշի մարզ

Հավելված 2

Հաստատված է ՀՀ էներգետիկայի և

բնական պաշարների նախարարի

10 02 2014թ.

№ 14-Ն հրամանով

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՎԱՌԵԼԻՔԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ 2015- 2017ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Հ/Հ	**Ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ տարածքային կառավարման մարմիններ**	**Քննարկումների անցկացում**
1	ՀՀ Արագածոտնի մարզ	2014թ ապրիլի 8
2	ՀՀ Արարատի մարզ	2014թ ապրիլի 9
3	ՀՀ Արմավիրի մարզ	2014թ ապրիլի 8
4	ՀՀ Գեղարքունիքի մարզ	2014թ ապրիլի 10
5	ՀՀ Լոռու մարզ	2014թ ապրիլի 11
6	ՀՀ Կոտայքի մարզ	2014թ ապրիլի 10
7	ՀՀ Շիրակի մարզ	2014թ ապրիլի 8
8	ՀՀ Սյունիքի մարզ	2014թ ապրիլի 9
9	ՀՀ Վայոց Ձորի մարզ	2014թ ապրիլի 9
10	ՀՀ Տավուշի մարզ	2014թ ապրիլի 11